

**Ա Ր Չ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**  
**Երևանի պետական համալսարանի**  
**Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի**  
**2021 թ. փետրվարի 3-ին հարցման եղանակով անցկացրած թիվ 5 նիստի**

**Օրակարգում՝**

1. ՀՀ ԿԳՄՍ նախարարության Գիտության կոմիտեի և Հիմնարար հետազոտությունների բելառուսական հանրապետական հիմնադրամի կողմից անցկացվող գիտական հետազոտությունների համատեղ ծրագրերի աջակցության «ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ - ՀՀԲՀՀ - 2021» միջազգային մրցույթին նախագծերի մասնակցելու երաշխավորության հարցը:
2. Երևանի պետական համալսարանում էրազմուս+ ABioNet “Armenian Network of Excellence in Bio-products Science and Technology” («Բիոարտադրանքների գիտության և տեխնոլոգիաների հայաստանյան գերազանցության ցանց») 2017-2020 ծրագրի շրջանակներում որոշ կրթական ծրագրերի, մոդուլների վերանայման և թարմացման հարցը:
3. Անվանական կրթաթոշակների շնորհման հարցը:
4. Ընթացիկ հարցեր:

**ԼՄԵՑԻՆ՝** ՀՀ ԿԳՄՍ նախարարության Գիտության կոմիտեի և Հիմնարար հետազոտությունների բելառուսական հանրապետական հիմնադրամի կողմից անցկացվող գիտական հետազոտությունների համատեղ ծրագրերի աջակցության «ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ - ՀՀԲՀՀ - 2021» միջազգային մրցույթին նախագծերի մասնակցելու երաշխավորության հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝** կենսաբանության ֆակուլտետի դեկան՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ. Է.Ս.Գևորգյանը, թեմաների ղեկավարները:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** երաշխավորել նախագծերի թեմաները՝

1. **Թեմա՝** «Հայաստանի և Բելառուսի որոշ հատուկ պահպանվող տարածքների միկրոբիոտայի տեսակային բազմազանության առանձնահատկությունները, փոփոխությունների ժամանակակից միտումները և պահպանությունը»:

**Ղեկավար՝** բուսաբանության և սնկաբանության ամբիոնի վարիչ, կ.գ.դ. պրոֆեսոր Սիրանուշ Գերասիմի Նանագյուլյան:

2. **Թեմա՝** «Կլիմայի փոփոխության ազդեցությունը Արևելյան Եվրոպայի և Հարավային Կովկասի ողնաշարավոր կենդանիների տարածման վրա անցյալում և ներկայում»:

**Ղեկավար՝** կենդանաբանության ամբիոնի վարիչ կ.գ.դ., պրոֆեսոր Մարինե Սեմյոնի Առաքելյան:

3. **Թեմա՝** «Օքսիդավերականգնողական ֆերմենտների և սիդերոֆիլային նանոմասնիկների համալիրների դերը՝ կենսավառելիքային սարքերի էլեկտրոդների էլեկտրակատալիզային գործընթացների բարելավման մեջ»:  
**Ղեկավար՝** կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի դոցենտ, կ.գ.թ. Աննա Արշակի Փոլադյան:

4. **Թեմա՝** «Ֆիզիոլոգիական և կենսաքիմիական վերլուծության, թվային ֆենոտիպավորման և բջիջների ընտրության միջոցով *Chlorellaceae* միկրոօրգանիզմների բելառուսական և հայկական շտամների աճման բնութագրերի ու H<sub>2</sub>-ի արտադրման ակտիվության ուսումնասիրություն և օպտիմալացում»:

**Ղեկավար՝** կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի դոցենտ, կ.գ.թ. Լիլիթ Սերգեյի Գաբրիելյան:

5. **Թեմա՝** «Ալգինատ-Ag հիդրոգոլների սինթեզ և դրանց հիման վրա նոր հակաբիոտիկների հետ կոմպոզիցիաների ձևավորում՝ ձկների աերոմոնադ և պսեուդոմոնադ ինֆեկցիաների կանխարգելման և բուժման համար»  
**Ղեկավար՝** Կենսաբանության ֆակուլտետի «Կենսաբանության» ԳՀ ինստիտուտի, մանրէաբանության, կենսաէներգետիկայի և կենսատեխնոլոգիայի լաբորատորիայի գիտաշխատող, կ.գ.թ. Կարինե Մարտինի Գրիգորյան:

**ԼՄԵՑԻՆ՝** Երևանի պետական համալսարանում էրազմուս+ ABioNet “Armenian Network of Excellence in Bio-products Science and Technology” («Բիոարտադրանքների գիտության և տեխնոլոգիաների հայաստանյան գերազանցության ցանց») 2017-2020 ծրագրի շրջանակներում որոշ կրթական ծրագրերի, մոդուլների վերանայման և թարմացման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝** կենսաբանության ֆակուլտետի դեկան՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ. Է.Ս. Գևորգյանը, էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի վարիչ, կ.գ.թ., դոցենտ՝ Նելլի Ալեքսանդրի Հովհաննիսյանը: Նշվեց, որ ծրագրի շրջանակներում վերանայվել և թարմացվել են որոշ կրթական ծրագրերի և մոդուլների բովանդակությունը, թարմացվել են մասնագրերը, մշակվել են մոդուլի ձեռնարկներ անգլերեն և հայերեն լեզուներով:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** հաստատել վերանայված և թարմացված կրթական ծրագրերի բովանդակության և մոդուլների փոփոխությունները:


**ԼՍԵՑԻՆ՝** Լևոն Օրբելու և Նորայր Միսակյանի անվան անվանական կրթաթոշակներիի շնորհման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝** կենսաբանության ֆակուլտետի դեկան, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆեսոր Է.Ս. Գևորգյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** հաշվի առնելով բարձր առաջադիմությունը և ակտիվ մասնակցությունը գիտահետազոտական և հասարակական աշխատանքներին՝ Նորայր Միսակյանի անվան կրթաթոշակը շարունակել հատկացնել կենսաբանության ֆակուլտետի մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանողուհի Սաթենիկ Մխիթարի Խալաթյանին, իսկ Լևոն Օրբելու անվան կրթաթոշակը հատկացնել կենսաբանության ֆակուլտետի մագիստրատուրայի երկրորդ կուրսի ուսանողուհի Տաթևիկ Արսենի Ստեփանյանին:

Գիտական խորհրդի նախագահ՝

ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ.



Է.Ս. Գևորգյան

Գիտական խորհրդի քարտուղար՝  
դոցենտ՝



Ի.Վ. Շահազիզյան